

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/3

13 մայիսի 2014 թ.

Քննարկվեց Ստեյլա Գրիգորյանի 10.04.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 25.03.2014 թ-ի թիվ 222 որոշման դեմ:

Ստեյլա Գրիգորյանի գանգատում բերված փաստարկները.

2014 թ-ի մարտի 27-ին ստացել է հարկ վճարողից չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 25.03.2014 թ-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի թիվ 222 որոշումը:

Ըստ որոշման, քննարկվել է իր վերաբերյալ վարչական վարույթի նյութերը և կայացվել է որոշում՝ գանձել չկատարված հարկային պարտավորությունների գումարը 61.900 դրամ, որն առաջացել է 2011 թ-ի սեպտեմբեր ամսից մինչև 2012 թ-ի ապրիլ ամիսն ընկած ժամանակաշրջանում կատարված հաշվարկներից և տույժերից:

Կայացրած որոշման հետ Ստեյլա Գրիգորյանը համաձայն չէ և գտնում է, որ այն պետք է վերացնել հետևյալ հիմքերով.

1.. իր վերաբերյալ վարչական վարույթի մասին տեղեկացված չի եղել, հետևաբար վարույթը չի կարող օրինական լինել:

2. Դեռևս 2012 թ-ի ապրիլի 5-ին ՀՀ ԱՆ Պետական ռեգիստրում կատարվել է գրանցում՝ Անհատ ձեռնարկատիրոջը հաշվառումից հանելու մասին: Այդ գործընթացը կատարվել է օրենքով սահմանված կարգով:

Նշված փաստերը հիմք են տալիս պնդելու, որ 25.03.2014 թ-ին կայացված թիվ 222 որոշումն անհիմն է:

Վերոնշյալի հիման վրա Ստեյլա Գրիգորյանը խնդրում է քննության առնել սույն դիմումը և վերացել ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 25.03.2014 թ-ի թիվ 222 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի 25.03.2014 թ-ի թիվ 222 որոշման (այսուհետ նաև Որոշում) համաձայն, 21.03.2014 թ-ի դրությամբ Ստեյլա Գրիգորյանի (ՀՎՀՀ 66902921, հասցե՝ ք.Վանաձոր, Պռոշյան 21) չկատարած պարտավորությունների գումարը կազմում է 61.900 դրամ, որից սոցիալական ապահովության վճարի ապառք՝ 40.000 դրամ, տույժ՝ 21.900 դրամ:

Նշված գումարն առաջացել է 2011 թ-ի սեպտեմբերից մինչև 2012 թ-ի ապրիլ ամիսն ընկած ժամանակահատվածում ամսեկան նվազագույն սոցիալական ապահովության վճարի հաշվարկներից և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հաշվարկված տույժերից:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածների դրույթներով ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի կողմից ընդունվել է 25.03.2014 թ-ի թիվ 222 որոշումը՝ Ստեյլա Գրիգորյանից 61.900 դրամ գումար գանձման առաջադրելու մասին: Մասնավորապես, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն. «Հարկային պարտավորությունների գծով գումարների

վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս»:

Քննարկվող դեպքում 21.03.2014 թ-ի դրությամբ Ստեյլա Գրիգորյանի սոցիալական ապահովության վճարի գծով չկատարած պարտավորությունների գումարը կազմել է 61.900 դրամ: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ պետի կողմից ընդունվել է 25.03.2014 թ-ի թիվ 222 որոշումը 61.900 դրամ վճարման ենթակա գումարը գանձելու մասին:

Ընդունված Որոշման մասին Ստեյլա Գրիգորյանին պատշաճ ծանուցվել է (10.04.2014 թ-ի գանգատի համաձայն, այն իր կողմից ստացվել է 27.03.2014 թ-ին):

2. «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն. «Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է»:

Իր հերթին, նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն. «Անհատ ձեռնարկատերն ունի գույք՝ սեփականության իրավունքով, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով»:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի 05.04.2012 թ-ի տեղեկանքի համաձայն Ա/Ձ Ստեյլա Գրիգորյանը հաշվառումից գուրս է եկել 05.04.2012 թ-ից, սակայն հաշվի առնելով, որ մինչև հաշվառումից դուրս գալը Ա/Ձ Ստեյլա Գրիգորյանը ունեցել է չկատարված պարտավորություններ, հետևապես որպես ֆիզիկական անձ Ստեյլա Գրիգորյանն իր պարտավորությունների համար պետք է կրի պատասխանատվություն:

Սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ներկայացվել են քննարկման Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստեյլա Գրիգորյանի 10.04.2014 թ-ի գանգատը մերժել:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ